րիաս յառաջագոյն աթոռակից և գործակից էր նմին յամենայն իրս, որպէս գրի 'ի յիշատակարանս մատենից։ «Գրեցաւ յառաջնորդութեան Տէր Աստուածատուր և Տէր Անդրիաս Արքեպիսկոպոսաց՝ և շնորհալից Դաւթին։ Եւ նոր նահատակացն Յովհաննէս հայրապետի, Սարգիս եպիսկոպոսի և Դաւթի կրօնաւորի, որք նուիրակ առաքեցան յԵրմիածնէն և նահատակեցան 'ի Կոստանդինուպօլիս գլխատմամբ սրոյ։ (1508)։ Սակայն տեսեալ միաբանաց և նմին իսկ Աստուածատրոյ զյաջողակութիւն 'ի գործս և ճարտարութիւն 'ի բանս Անդրիասայ, ընտրեցին զնա գլուխ և առաջնորդ ինքեանց, և ամենեքեան ի՛ջեալ 'ի դատարան, յայտ արարին առաջի դատաւորին և այլազգեաց զընտրութիւն միոյն և զհրաժարումն միւսոյն, և ձկայեցին զԱնդրիասէ թէ՝ է այր բարի և հաւատարիմ յամենայն գործս իւր, և խնդրեցին հաստատել զպատրիարքութիւն նորին օրինօք դատարանի 'ի տեղի Աստուածատրոյ, և առին մուրհակ հրաժարման 'ի դատաւորէն ընդ արքունի հրամանի, և ապա ասեն՝ չունիմք ատելութիւն կամ հակառակութիւն զԱստուածատրոյ, նոյնպէս և սա՝ զԱնդրիասէ։ Ցետ լսելոյ դատաւորին զբանս երկաքանչիւրոցն, հաստատեաց զՊատրիարքութիւնն 'ի վերայ Անդրիասայ, ՌԷՌ (1542)։

Դարձ արարեալ անտի նստուցին յաթոռն զՏէր Անդրիաս, որ և կոչեցաւ Պարոն Տէր։ Ի սմին ամի յորում նստաւ Անդրիաս յաթոռ Պատրիարքութեան, յարուցին վէճս Յոյնք յաւուր Ճրագալուցի Զատկի, զի մինչեւ ցայն վայր սովորութիւն լեալ էր 'ի մէջ ազգաց, յերեկոյին յայնմիկ 'ի կատարել զհանդէս Լուսաւորութեան, մտանէին 'ի Գերեզմանն Քրիստոսի։ Նախ տեսուչն Հապեշաց և ապա Պատրիարքունք Յունաց և Հայոց, և զկնի նոցա տեսուչքն Վրաց եւ Գրիգոր։ այլ 'ի սմին ամի ընդդէմ կացին Յոյնք այսմ սովորութեան, զի կամէին նախ մըտանել Պատրիարքին իւրեանց՝ և ապա այլոց։ որոյ վասն եղեւ կռիւ և խռովութիւն 'ի նմին պահու։ այլ 'ի վերայ հասեալ այլազգեաց հանդարտեցին զնոսա առ ժամն, եւ ետուն կատարել զհանդէսն ըստ առաջին սովորութեան։ և զդատս իւրեանց վարել յատենի արքային։ Զորմէ յետոյ։ տաղտկացեալ Անդրիասայ 'ի նեղութենէ այլազգեաց